ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Թվային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում խաղային գործունեությունը և դրա հետ կապված ծառայությունները լայնորեն տեղափոխվել են առցանց միջավայր: Միաժամանակ ձևավորվել են իրավիճակներ, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում հասանելի են դառնում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից առաջարկվող խաղային ծառայություններ, ինչպես նաև դրանց գովազդը:

Գործող իրավակարգավորումը լիարժեք չի ապահովում՝

- Հայաստանի Հանրապետությունում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորության արդյունավետ սահմանափակումը,
- նման կայքերի և դրանց ապրանքային նշանների գովազդի կանխումը,
- վճարահաշվարկային գործարքների նկատմամբ բավարար վերահսկողությունը,
- լիցենզավորման պայմանների և պահանջների արդյունավետ վերահսկման գործիքակազմը:

Արդյունքում ստեղծվում է իրավական և գործնական անհամաչափություն. լիցենզավորված կազմակերպիչները գործում են խիստ կարգավորման պայմաններում, մինչդեռ չլիցենզավորված սուբյեկտները կարող են առանց համարժեք վերահսկողության ներգրավել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձանց: Սա խաթարում է հավասար մրցակցային պայմանները, նվազեցնում է կարգավորվող շուկայի բաժինը և թուլացնում պետական վերահսկողության արդյունավետությունը:

Միաժամանակ առցանց միջավայրում գովազդի թիրախավորման տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս շրջանցել գործող սահմանափակումները՝ ապահովելով արգելված կամ չթույլատրված առաջարկների հասանելիություն Հայաստանի Հանրապետության տարածքում:

Նշված խնդիրները պայմանավորում են իրավական հստակեցումների և լրացուցիչ գործիքների ներդրման անհրաժեշտությունը՝ ուղղված.

- չլիցենզավորված խաղային առաջարկների հասանելիության սահմանափակմանը,
- դրանց գովազդի կանխմանը,
- ֆինանսական հոսքերի վերահսկելիության բարձրացմանը,
- լիցենզավորման պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետության ուժեղացմանը:

Այսպիսով, նախագծերի ընդունումը պայմանավորված է առցանց միջավայրում ձևավորված կարգավորման բացերի վերացմամբ և խաղային ոլորտում պետական վերահսկողության արդյունավետության ապահովման անհրաժեշտությամբ:

Մյուս կողմից բազմաթիվ են գովազդային վիճակախաղերը, որոնք կազմակերպվում կամ իրականացվում են իրավաբանական անձանց կամ անհատների կողմից: Գործող իրավական կարգավորումների պայմաններում անորոշ է, ով է հանդիսանում գովազդային վիճակախաղի իրական կազմակերպիչը և արդյոք տվյալ խաղարկությունը հանդիսանում է գովազդային վիճակախաղ կազմակերպում:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենք համաձայն խաղային գործունեության կազմակերպիչ է հանդիսանում նաև վիճակախաղի կազմակերպիչը և համաձայն Օրենքի խաղային գործունեության կազմակերպիչն ապահովում է խաղային հաշվի ստեղծումը: Օրենքը սահմանում է նաև, որ վիճակախաղը կարող է կազմակերպվել խաղասրահում: Արդյունքում վիճակախաղի կազմակերպիչը չունի որևէ տեխնիկական հնարավորություն խաղային հաշիվ ստեղծելու համար: Միաժամանակ, գործող Օրենքում սահմանված է վիճակախաղի կազմակերպում կայքերի և հավելվածների միջոցով, որը հնարավոր չէ խաղասրահի միջոցով գործունեություն իրականացնելիս:

Գովազդի նկատմամբ պատշաճ և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով սահմանվել է դրույթ, որի համաձայն նախքան շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի, վիճակախաղի և բուքմեյքերային գործունեության գովազդի հրապարակումը Լիազոր մարմնի սահմանված կարգով դրա բովանդակության էլեկտրոնային տարբերակով համաձայնեցվում է Լիազոր մարմնի հետ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2.1. Գործող ընթացակարգի բարդությունն ու տևողությունը

Ներկայումս օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կողմից կազմակերպվող ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի կայքերի արգելափակումը իրականացվում է բազմափուլ և համադրական վարչարարական ընթացակարգով:

Ընթացակարգը ներառում է.

- մշտադիտարկում և տեղեկատվության հավաքագրում,
- միջգերատեսչական հանձնաժողովի կողմից քննարկում,
- շահագրգիռ մարմինների (ԱԱԾ, ԲՏԱՆ) դիրքորոշումների ստացում,
- հանձնաժողովի եզրակացության ընդունում և հրապարակում,
- լիազոր մարմնի ղեկավարի կողմից ցանկի հաստատում,
- ցանկի փոխանցում ՀԾԿՀ,

- ՀԾԿՀ-ի կողմից այն օպերատորներին ուղարկում,
- օպերատորների կողմից DNS արգելափակում:

Նորմատիվ ժամկետների հաշվարկով՝

- շահագրգիռ մարմինների դիրքորոշումները ներկայացվում են հանձնաժողովի նիստից առնվազն 2 օր առաջ,
- ցանկը հաստատելուց հետո 1 օրվա ընթացքում փոխանցվում է ՀԾԿՀ,
- ՀԾԿՀ-ը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է օպերատորներին,
- օպերատորները արգելափակում են կայքերը 5 աշխատանքային օրվա ընթացքում (առաջին ցանկի դեպքում՝ 10 աշխատանքային օր):

Այսպիսով, միայն իրավական-տեխնիկական փուլերի հանրագումարով արգելափակումը կարող է տևել առնվազն **9–11 աշխատանքային օր**, իսկ առաջին ցանկի դեպքում՝ մինչև **14 աշխատանքային օր**, չհաշված նախորդող մշտադիտարկման, վերլուծության և հանձնաժողովային քննարկման ժամանակահատվածը:

Միաժամանակ, կայքերի ադմինիստրատորներին տրամադրվում է **15-օրյա ժամկետ**՝ միջոցներ ձեռնարկելու համար:

Գործնականում սա նշանակում է, որ չլիցենզավորված կայքը կարող է շարունակել հասանելի լինել և ներգրավել խաղացողներին մի քանի շաբաթվա ընթացքում, մինչդեռ թվային միջավայրում դոմեյնների փոփոխությունը, «mirror» կայքերի ստեղծումը և նոր հասցեներով գործունեության շարունակումը հնարավոր է ժամերի կամ օրերի ընթացքում:

Արդյունքում առկա մեխանիզմը հաճախ արձագանքող է, այլ ոչ կանխարգելիչ:

2.2. Միջազգային փորձը և շուկայի վերահսկելիության ռիսկերը

Եվրոպական շուկաների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե չկան արագ և արդյունավետ գործիքներ չլիցենզավորված առաջարկների սահմանափակման համար, շուկայի մի հատված տեղափոխվում է չկարգավորվող դաշտ:

PwC-ի եվրոպական համեմատական ուսումնասիրության համաձայն՝ կարգավորման խստացում արձանագրած երկրներում օնլայն խաղային կազմակերպիչների (լիցենզավորված օպերատորների բաժինը ընդհանուր շրջանառության մեջ) միջինում նվազել է շուրջ **2 տոկոսային կետով**, մինչդեռ կայուն կարգավորում ունեցող երկրներում աճել է **7 տոկոսային կետով**, իսկ լիբերալացման դեպքում՝ **15 տոկոսային կետով:**

Գերմանիայի օրինակով նշվում է, որ խաղացողների մոտ 49%-ը օգտվել է օֆշորային չլիցենզավորված կայքերից:

Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ բարձր ծախսող խաղացողների 5%-ը ձևավորում է ընդհանուր խաղադրույքների շուրջ 80%-ը: Այս խմբի տեղափոխումը չլիցենզավորված հարթակներ էական ազդեցություն է ունենում շուկայի վերահսկելիության և պետական եկամուտների վրա: Այս

տվյալները ցույց են տալիս, որ առանց արդյունավետ արգելափակման և վերահսկողության մեխանիզմների, լիցենզավորման համակարգը չի կարող ապահովել շուկայի ամբողջական վերահսկելիություն:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքով լիազոր մարմնի սահմանված կարգով դրա բովանդակության էլեկտրոնային տարբերակով համաձայնեցման պահանջ սահմանված է միայն վիճակախաղի կազմակերպիչների նկատմամբ: Նախագծով առաջարկվում է սահմանել հավասար կարգավորում խաղային գործունեության բոլոր ոլորտների համար՝ ապահովելով միասնական մոտեցում և նպաստելով ռիսկերի նվազեցմանը:

3. Գովազդի բաղադրիչը

Թվային միջավայրում չլիցենզավորված կայքերի տարածմանը նպաստում է նաև միջազգային առցանց գովազդային հարթակների միջոցով իրականացվող թիրախավորված գովազդը:

Գործող կարգավորումները չեն ապահովում բավարար գործիքակազմ՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օգտատերերի նկատմամբ արգելված կամ չթույլատրված խաղային առաջարկների թիրախավորումը կանխելու,
- միջազգային հարթակների հետ արդյունավետ փոխգործակցություն իրականացնելու համար:

Արդյունքում ձևավորվում է իրավիճակ, երբ մի կողմից իրականացվում է բազմափուլ և ժամանակատար արգելափակում, իսկ մյուս կողմից նույն առաջարկը կարող է նոր դոմեյնով կամ այլ հարթակով շարունակել գովազդվել և հասանելի լինել օգտատերերին:

2.4 Գործող իրավական կարգավորումը չի ապահովում հստակություն գովազդային վիճակախաղի կազմակերպիչ հասկացության շուրջ: Արդյունքում ձևավորվում է անորոշություն գովազդային վիճակախաղի կազմակերպչի որոշման և համապատասխան վերահսկողության վերաբերյալ:

Գործող Օրենքը նախատեսում է, որ խաղային գործունեության կազմակերպիչը պարտավոր է ապահովել խաղային հաշվի ստեղծումը: Մյուս կողմից Օրենքը թույլ է տալիս վիճակախաղերի կազմակերպումը խաղասրահներում: Արդյունքում ձևավորվում է իրավիճակ, երբ փաստացի անհնար է խաղային հաշվի ստեղծումը վիճակախաղերի կազմակերպիչների համար, ինչպես նաև վիճակախերի կազմակերպումը կայքերի և հավելվածների միջոցով:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծի հիմնական նպատակը խաղային գործունեության ոլորտում պետական վերահսկողության արդյունավետության բարձրացումն է՝ առցանց միջավայրում չլիցենզավորված առաջարկների հասանելիության սահմանափակման, դրանց գովազդի կանխման և ֆինանսական հոսքերի վերահսկելիության ուժեղացման միջոցով:

Կարգավորումը միտված է՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում չլիցենզավորված կազմակերպիչների կողմից խաղային գործունեության մասնակցության հնարավորության կանխարգելմանը,

2. նման կայքերի և դրանց ապրանքային նշանների գովազդի սահմանափակմանը,

3. լիցենզավորված և չլիցենզավորված սուբյեկտների միջև հավասար մրցակցային պայմանների ապահովմանը,

4. լիցենզավորման պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքների ընդլայնմանը:

Արգելափակման մեխանիզմի բարելավում

Գործող կարգավորմամբ չլիցենզավորված կազմակերպիչների կայքերի արգելափակումը իրականացվում է բազմափուլ վարչարարական ընթացակարգով, որը ներառում է միջգերատեսչական հանձնաժողովի ձևաչափով քննարկումներ, շահագրգիռ մարմինների դիրքորոշումների ստացում, եզրակացության ընդունում, ցանկերի հաստատում և փոխանցում կարգավորող մարմիններին, այնուհետև՝ օպերատորների կողմից տեխնիկական արգելափակում:

Այս գործընթացը, նույնիսկ նորմատիվ ժամկետների պայմաններում, կարող է տևել առնվազն 9–14 աշխատանքային օր՝ չհաշված նախնական մշտադիտարկման և վերլուծության փուլերը: Միաժամանակ, կայքերի ադմինիստրատորներին տրամադրվում է լրացուցիչ 15-օրյա ժամկետ միջոցներ ձեռնարկելու համար:

Թվային միջավայրում, որտեղ դոմեյնների փոփոխությունը կամ հայելային կայքերի ստեղծումը հնարավոր է կարճ ժամանակում, նման բազմափուլ ընթացակարգը հաճախ չի ապահովում բավարար օպերատիվություն և կանխարգելիչ ազդեցություն:

Նախագծով առաջարկվում է վերանայել գործող մոտեցումը և ամրագրել ավելի հստակ ու օպերատիվ մեխանիզմ՝

- չլիցենզավորված կազմակերպիչների խաղային գործունեության մասնակցության հնարավորություն նախատեսող կայքերի արգելափակում՝ կառավարության կողմից սահմանվող կարգով և դեպքերում,
- արգելափակման իրականացում ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող օպերատորների կողմից՝ հաստատված ցանկի հիման վրա,
- տվյալ կայքերի և դրանց ապրանքային նշանների միջոցով իրականացվող դրամական գործարքների սահմանափակում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

Այսպիսով, նախագծով առաջարկվում է անցում կատարել միջգերատեսչական երկարատև ընթացակարգից դեպի ավելի կենտրոնացված և իրավասու մարմնի կողմից ղեկավարվող մեխանիզմ՝ պահպանելով իրավական հիմնավորվածությունը, բայց բարձրացնելով գործնական արդյունավետությունն ու արձագանքման արագությունը:

Նախագծով առաջարկվում է հստակ սահմանել «գովազդային վիճակախաղի կազմակերպիչ» հասկացությունը, այդպիսով ապահովել Օրենքի կիրառումը և արդյունավետ վերահսկողությունը:

Նախագծով առաջարկվում է հստակեցնել Օրենքի պահանջը կազմակերպիչների նկատմամբ ովքեր պարտավոր են ստեղծել խաղային հաշիվ: Նշված կարգավորումը կապահովի իրավական հստակություն և հնարավորություն կստեղծի լիարժեք պետական վերահսկողության իրականացման համար:

Կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվող փոփոխությունները կրում են կարգավորող և պաշտպանական բնույթ: Դրանք ուղղված չեն օրինական գործունեության սահմանափակմանը կամ շուկայի ընդհանուր խստացմանը, այլ միտված են գործող լիցենզավորման համակարգի արդյունավետության ապահովմանը և դրա շրջանցման հնարավորությունների նվազեցմանը:

Կարգավորումը նախատեսում է անցում արձագանքող մեխանիզմներից դեպի ավելի համակարգային և կանխարգելիչ մոտեցում՝ ապահովելով, որ չլիցենզավորված սուբյեկտները չկարողանան տեխնիկական կամ իրավական բացերի միջոցով ներգրավել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող խաղացողներին:

Այսպիսով, կարգավորման նպատակը լիցենզավորված շուկայի պաշտպանությունն է, պետական վերահսկողության գործնական արդյունավետության բարձրացումը և առցանց միջավայրում իրավական արգելքների կիրառելիության ապահովումը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է.

1. **Չլիցենզավորված խաղային առաջարկների հասանելիության նվազում** Հայաստանի Հանրապետության տարածքում՝ կայքերի արգելափակման և ֆինանսական գործարքների սահմանափակման համակցված մեխանիզմների կիրառման շնորհիվ:
2. **Գովազդային ազդեցության սահմանափակում**, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օգտատերերի նկատմամբ չթույլատրված կամ չլիցենզավորված խաղային առաջարկների թիրախավորման նվազեցում:
3. **Լիցենզավորված շուկայի մրցակցային պայմանների հավասարեցում**, քանի որ օրինական գործունեություն իրականացնող կազմակերպիչները չեն գտնվի անհավասար վիճակում՝ չլիցենզավորված սուբյեկտների նկատմամբ:

4. **Պետական վերահսկողության արդյունավետության բարձրացում**, պայմանավորված արգելափակման և վերահսկողական գործիքների օպերատիվ կիրառմամբ:

5. **Շուկայի վերահսկելիության (channelisation) պահպանման կամ բարձրացման հնարավորություն**, քանի որ չլիցենզավորված հարթակների սահմանափակումը նպաստում է խաղացողների ներգրավվածությանը լիցենզավորված և վերահսկվող հատվածում:

6. **Ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացում**, ինչի արդյունքում հնարավոր կլինի ավելի արդյունավետ իրականացնել հարկային և կարգավորող քաղաքականությունը:

Միաժամանակ նախագծով առաջարկվող կարգավորումները ուղղված չեն օրինական խաղային գործունեության սահմանափակմանը կամ հարկային բեռի ավելացմանը, այլ միտված են գործող լիցենզավորման համակարգի արդյունավետության ապահովմանը և դրա շրջանցման ռիսկերի նվազեցմանը:

Ակնկալվում է, որ համակցված տեխնիկական, ֆինանսական և գովազդային սահմանափակումների կիրառումը կնվազեցնի շուկայի արտահոսքի ռիսկերը և կբարձրացնի կարգավորվող ոլորտի կայունությունը:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի մշակումը բխում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 12 դեկտեմբեր 2019թ. «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 1830-Լ որոշման 2-րդ նպատակի 2.1.5 ենթանպատակից: